

ՀՌՈՄԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դժվար է սառույդ տվյալներ բերել այն մասին, թե երբ են հայերը առաջին անգամ հաստատվել Հռոմում¹, Արդեն 649 թ. կայացած Հաթերանի եկեղեցական ժողովի արձանագրություններում, նրա մասնակիցների թվում, ավանդված է նաև Հռոմում Ս. Կուլսին և Ս. Անդրեասին նվիրված հայկական «Renati» վանքի վանահայր Թալասիոսի անունը, որը եղել է նաև ժողովի որոշումները ստորագրողներից մեկը², Հռոմում հայոց հաստատման մասին ավելի մանրամասն ակնկալություններ հանդիպում են միայն XIII դարի 30—40-ական թթ. Հռոմում ընդօրինակված հայերեն ձեռագրերում, ուր հիշատակվում է «հանդուսարան հայոց»-ը «ի դրան սրբոյ մարտ յուսոյ Սանթա Մարէ», կամ ինչպես մի այլ տարբերակում՝ «ի հանդրստարանի տանս Հայոց, ի դրան սուրբ Ասատուածածնիս»³, Դժվար է, թերևս սառույդ նշել, թե որտեղ էր դանդում այս «հանդուսարանը» և այն ինչ վախճան ունեցավ: Սակայն հայերին շնորհված եկեղեցիների ու հյուրատների⁴ պատմության անընդհատականությունը հաջողվում է հեռանկ սկսած XVI դարից:

Այսպես, 1563 թ. Պիոս IV պապի կողմից, Հռոմի Տիրերի թաղում՝ Աստվածամոր կամրջի մոտ, հայերին շնորհվեց Ս. Լավրենտի եկեղեցին: Հակված ենք ճիշտ համարելու այն դիտարկումը, որի համաձայն եկեղեցին ստանալու առաջնությունը վերագրվում է Արդար դպիր Թոխսթեցուն, որը Միքայել Սերաստացի կաթողիկոսի կոնդակով և որոշակի հանձնարարականներով 1562-ին ժամանել էր Հռոմ⁵, եկեղեցին հանձնելու հետ մեկտեղ նույն ժամանակ պա-

¹ Հռոմում և ընդհանրապես Իտալիայում հայկական զաղթողների մասին աե՛ս Ն. Ն. Փեյրիլյան. Հայկական նշխարներ և նշմարներ Իտալիո մեջ: Ա.ի Հռոմ.—«Բաղմավես», 1933, № 5, էջ 107, № 7—8, էջ 207—209, B. I. Zeklyan. Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli armeni in Italia).—Primo Simposio Internazionale di Arte Armena-Bergamo 1975. A.III. Venezia, 1978, pp. 803—931. Երանոթ ենք նաև Ղ. Այիշանի հավարած փաստաթղթերից ցարդ անտիպ խոշոր հատորին՝ «Armeni in Italia», որ պահվում է իր անձնական դիվանում, Ս. Ղաղարում:

² Տե՛ս B. I. Zeklyan. Le colonie armene p. 833. Հմմտ. Ժ. Գեղեյան. Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան եվրոպայում X դարի վերջում—XI դարի սկզբում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1934, № 3, էջ 21—22:

³ Տե՛ս Գ. Ղարաջանյան. Մասնագրության հայկական թարգմանութեանց նախնեաց (զար Գ—ՏԲ). Վենետիկ, 1889, էջ 163, Գարեգին Ա. կաթողիկոս. Հիշատակարանը ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 936—937, 941—942:

⁴ Աղբյուրներում հաճախ հանդիպող այս տերմինի կողքին օգտադործվում է նաև «հայտուն», «հայոց հողատուն», «հայոց հյուրանոց» և այլն: Միօրինակություն պահպանելու նպատակով ստորև օգտագործում ենք «հյուրատուն» բառը:

⁵ Տե՛ս Ստեփաննոս Գիվեր Ազնց. Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, հ. Ե, մասն երկրորդ, Երուսալ, Վենետիկ—Ս. Ղաղար, 1802, էջ 82—83, Հմմտ. նաև Մեսրոպ վ. Ողորդիտն. Պատմութիւն հայոց զաղթականութեան և շինութեան եկեղեցոյ նոցա ի կրկնոյնոյ բազարի, Վենետիկ, 1891, էջ 222—223, Ն. Վ. Մովսիսյան. Էջմիածին և Վտտիկան (1441—1941).—«Հասկ» Գայտգիտական ժողովածու, Անթիլիաս, 1949—1959, էջ 347—348:

պի հրամանով պատրաստվեցին նաև հայերեն նոր տպագրական տառեր: 1565-ին Արղար դպիրի կողմից տպագրվեց հայոց առաջին տպագիր օրացույցը՝ «նստնայ փնթուր տումարի, զեղեցիկ և պիտանի» (Վենետիկ, 1565)⁶:

Սակայն, այս եկեղեցին քանդելուց հետո, Պիոս V պապի (1566—1572) կողմից, 1566 թ. հունիսի 11-ի կոնդակով, հայերին տրվեց Հռոմի անտիկ շրջանի կառույցներից մեկը՝ Սուրբ Մարիամ Եղիպտացի (Santa Maria Egiziaca) եկեղեցին և շոշակա տները՝ որպես հայոց հյուրատուն⁷: Այստեղ էին հյուրընկալվում Հռոմ ժամանող ինչպես հայերը, այնպես էլ, հաճախ, արևելյան քրիստոնյաներից զպտիները, մարոնիտները, ասորիները, վրացիները և այլն:

1585 թ. Գրիգոր XIII պապի կոնդակով՝ Մարիամ Եղիպտացու եկեղեցուն կից հիմնվում էր նաև հայոց վարժարան՝ Արևելքում կաթոլիկ քարոզչությունը ասրածելու նպատակով հողեորականներ պատրաստելու համար: Սրան նախորդել էին Հովհաննես Տերզյանցու և Սուլթանյահի կողմից 1584 թ. «Տումար Գրիգորեան» և «Գրամանութիւն ուղղափառութեան հոռմէական եկեղեցու» աշխատությունների հրատարակությունը Հռոմում: Պահպանվել է Սահ Ադարիա կաթողիկոսի 1585 թ. ապրիլի 10-ի շնորհակալական նամակը պապին. «...քանզի ի Հռոմ տուեալ ես քո Երանութիւնդ մեր ազգին եկեղեցի եւ օթառան եւ բազում ողորմութիւն եւ յետոյ մէկ դասատուն մի վասն ուսուցանելու տղայոց Հայոց եւ սվեր շինել նոր պատմագիր զեղեցիկ ի Հայոց լիզու...»⁸:

Մեզ հայտնի է նաև, որ Հռոմի հայոց հիւրատանը դրված նամակով Հովհաննէս Տերզյանցին, «չիշխանութիւն Հայոցն, որ ասա՝ արքայազնին պարոն Սուլտանշին» և այլք, օգնության խնդրանքով 1586 թվականին դիմել են իրոսազնմի Դավիթ պատրիարքին, խնդրելով ուղարկել «փոքր մաս մի ի նշխարաց Սրբոց»: Հռոմի հայոց եկեղեցու և հայ բնակչութեան փիճակի մասին է վկայում այդ նամակից հիւսիսայ հատվածը. «...տափն պարզեւեալ է ազգիս մերում եկեղեցի մի յանուն Սրբոցն Մարիամայ Եղիպտացուն և ուրին զկատարեալ տեւսն, զի եկամուտս յողորմութիւն ուրի յամէ Ճի [120] դրամ, զոր հագիս մեռ Հայոց իշխանն արքայազնին ի Հայկայ պարոն Սուլտանշան յառաջ բերեալ է, որ է ծառայակիդ քո և մեռ Հայկազնեանքն բազմաւեկ են աղքատք և շքաւեք, կարօտեալք և ինյանուաղք և ոչ բաւական են այս փոքր իրս նոցա ի կերակուր և յրմայլի և յանկողին, թաւո զսոսա այլ եւս ողորմութիւն շնորհեալ խնդրեն, որ և եւս բաշխեմք քստ կարի աղքատութեան մերում: Եւ մեզ տկարացս ծառայիոս քո տեսեալ օր քստ օրէ յբարեալ եկեղեցոյս մերոյ և յոյ ումեք օգնականութեան կայ ակն, խորհուող առարեալ այս փոքր հօտիտ՝ թէ հնար էր նոր իմս ի սրբութեանդ կողմանէ, յայտն: Ի լիցի եկեղեցոյս մեռու, ի բազմապ օշտութիւն հասանէ շքատրեալ

⁶ Այս մեկ մեծադիւղ էջանոց պատկերողարդ հնատիպի մինչ այժմ հայտնի միակ օրինակը, ու պահվում էր Սիլանի Ամբոսոյն մատենադարանում, ըստ զոգարանի տնտեսարեն Չեղարն Պապինից վերջնու ստացված համակի, ի թիվս այլ գրքերի այրվել է 1943 թ. հոգհհի ժամանակի նկարագրությունը տե՛ս Հ. Անուսյան. Հայկական մատենագիտություն. Կ—ժԸ զգ., Հ. Ա., Երևան, 1959, էջ 22, հմմտ. ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան. Ա. Մ. Սավալյան. Հայ դիրքը 1512—1800 թվականներին. Երևան, 1988, էջ 8:


⁷ Տե՛ս Մ. Չամչեան. Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 527; Հմմտ. M. Armeilini. Le chiese di Roma dal secolo IV al XIX. 2a ed. Roma 1891, p. 612—614.

⁸ Տե՛ս Bullarium diplomatorum et privilegiorum Romanorum Pontificum Taurinensis et. t. VIII. Napoli, 1783, p. 493—496

⁹ Ապարիա Զուգայեցի կաթողիկոսի նամակը պահվում է վատիկանի հայերեն ձեռագրերի հավաքածուի մեջ Տե՛ս ins. Vaticano Armeno № 2. p. 34: Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Codices Armeni Bibliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani Chistiani. Shedis Frederici Cornwallis Conybeare, abhibitis recensvit Evgenius Tisserant. Romae, MCMXXVII (1927), p. 202,

եկեղեցույս, զի քան զամենայն ազգաց եկեղեցի շքաւոր է. վասն զի Հոռմայեցիքս ազգ մի բազմահաւատք են և ամենայն իւրք հաւատարիմ հաւատնաւ, ևս առաւել ստուգութիւն զործոյն: Եւ մեր նուազ և տառապեալքս քան զամենայն ազգս վերասացեալ ծառայիցդ և փոքոտ օտիտ, որ եմք ի մէջ յիտալացոց և այլ բազում ազգացն՝ ոռպէս շիւղ մի ի մէջ անտառախիտ մայրեացն: Աղերս արկանեաք և արտասուօք խնդրեմք ի քէն տառապեալ որդիքս թո ի հողերս և յառատարաշխ հօռէտ մերմէ, զի դաւս ողորմութիւնս շնորհես տառապելոցս և հեռացելոցս ի փառաց սրբութենէդ քումէ...»¹⁰:

XVII դարի սկզբին Հոռմով անցնող և քրիստոնեական քաղաքով հիացած Սիմեոն Լեհացին հպարտությամբ առձանադրում էր. «Եւ Հայոց եկեղեցու անունն Սանթա Մառիալ էիրշիցքաւ, որ է Մարիամ Եղիպտացի» և հյուրատան մասին շարունակում. «Եւ եկեղեցին Հայոց քարէ մեծ և տասն օտաբարէ սնէր վասն ըխտաւորաց. այլ և զարպասնի կախկոպոսաց, քահայեցից և այլ կրօնաւորաց, սօշակ, անկողին»¹¹:



Հոռմի Ս. Մարիամ եղիպտացի եկեղեցին և Հայոց հյուրանոցը XVIII դարի զձագաակեր

Սիմեոն Լեհացույց մոտ 15 տարի անց Հոռմով անցնող Ավդուստին Բաջեցին քաղաքը նկարագրելիս շեշտում է. «Այս քաղաքումս ամէն ազգի ջոկ հողատուն ունի և եկեղեցի. Հայոց ազգի եկեղեցին կոչի սրբուհի Մարիամ Եղիպտացի, և սուրբ Գիորգիոս Լուսաւորչի խորանն հոն է խիստ պայծառ»¹²:

Տարբեր տարիներին Հոռմում տղայերի կողմից քաղաքի հայերին ու նրանց եկեղեցուն շնորհակցին մի շարք արատնություններ ու առանձնաշնորհումներ: Օրինակ Պողոս V-ի կողմից 1606 թ. Մարիամ Եղիպտացուն շնորհակցին Ալեքսանդր վիրահայի (Alexandrium Armenum Georgianum) և Հայոց հովանավոր Չինցիո (Cynthia) կաթողիկոսի բրամադրութիւններ: 1641 թ. Ուրբանոս VIII պապի հրամանով հայերին արվելցին այն երկու տնակները,

¹⁰ Մեծագիր, գարգանախոչ ու մաշված այս նամակը պահվում է Ս. Վազարի ձեռագրատանը՝ կոնդակների շարքում: Այն, առանց սեղր նշելու հրատարակել է Գ. Ալիշանը իր «Հայաստան» աշխատութեան մեջ (Վենետիկ, 1901, էջ 599—602):

¹¹ Տե՛ս Սիմեոն պապի Լեհացույ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք. ուսումնասիրեց և հրատարակեց Ն. Վ. Ալիևեան, Վիեննա, 1936, էջ 92, 130:

¹² Տե՛ս Ք. Պատկանեանի. Նշխարք մատենագրութեան Հայոց. Ս. Պետերբուրգ, 1884, էջ 19:

որոնք Մարիամ Եղիպտացի եկեղեցին անջրպետում էին շրջակա կառույցներին¹⁸։

Սուրբ Մարիամ Եղիպտացու եկեղեցու ներքին կյանքի և Հոռոմում հայոց անցուղարձի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել 1774 թ. Հոռոմի Հավատասփյուռ Ժողովի կողմից տրված և ապա 1839 թ. Ս. Ղազարի տպարանում հրատարակված «Կանոնք որ վասն հիւրանոցի ազգիս հայոց եկեղեցատան սրբուհւոյն Մարիամու Եղիպտացւոյն, սահմանեցաւ ի վսեմափառ ծիրանաւորէն Պամփիլեայ [Pietro Pamfili] ի պաշտպանէն մերմէ լամին 1774»¹⁴ գրքից։ «Կանոնքին» առաջին իսկ ծանոթութիւնը ցույց է տալիս, որ նրա հիմքում ընկած է Հոռոմում այլադղինների ապրելակերպի համար սահմանված կանոնիկ մի տեքստ։ Հավատասփյուռ Ժողովի կողմից 1774 թվականի հունվարի 4-ին սահմանված կանոնները (վավերացված հայոց հովանավոր կարգինալ Պամփիլիի կողմից) թույլ են տալիս դոն և մոտավորապես պատկերացնել այն միջավայրը, որում ապրում էին ուխտավոր հայերը։ Հաշմի առնելով հայադիտութիւնը «Կանոնքին» սակավածանոթ լինելը և նրա նշանակութիւնը դաղթօջախի կյանքում, ստորև համառոտ ներկայացնենք նրա հիմնական դրույթները։ Ըստ «Կանոնքի» Հոռոմում հայ եկեղեցու և հայկական համայնոսի ղեկավարութիւնը հանձնվում էր եկեղեցու ձեռնարող եպիսկոպոսին։ Հոռոմում ժամանակավոր բնակութիւն ունեցող հայերը (այսինքն հիմնականում ուխտավորներն ու վաճառականները) պարտավոր էին տալ «պաշտպանութիւն ուղղափառ հաւատոց ըստ վարդապետութեան հոռոմէական եկեղեցւոյ, որպէս պատուիրեսցէ նորա խոստովանահայրն՝ սպառնալիքօք սոստաքսելոյ զնոսա անդէն ի հիւրանոցէն»։ Հյուրատանը թույլատրվում էր ընդունել Արևելքի և կած ուխտավոր հայերին մոտ մեկ ամիս, իսկ եվրոպական երկրներից եկածներին կես ամիս ժամանակով։ Հայոց հյուրատան մրդտական ու ժամանակավոր բնակիչներին խոստադուինս պատվիրվում էր. «Մի՛ սուղտեղեսցեն զորմս եկեղեցատանն, եւ մի՛ զծաղրեսցեն ի նոսա ածխով կամ այլ իւրք. մի՛ զրեսցեն անդ ծաղու կամ այլ ինչ բանս կամ տառս յոր եւ է բարբառ»։ Հյուրատան բնակիչներին արգելվում էր քաղաքում մուրադկանութիւն սնելը, իրենց սենյակ կա՛յքը ղերելը և ընդհանրապես կանանց հետ շփումները թույլատրվում էին միայն հյուրատան սահմաններից դուրս, կամ եկեղեցւոյ։ Հյուրատանը ուխտավոր կանանց վարձու սենյակ տալը արգելվում էր¹⁵։

1832 թ. Գրիգոր XVI պապի կողմից Սուրբ Մարիամ Եղիպտացի եկեղեցու և հայոց Հյուրատան փոխարեն, հայոց համաձայնութեամբ, հոռոմեանակ հայերին հանձնվեց Հուլիան փողոցում գտնվող (via Guilia) Ս. Վլաս եկեղեցին ու նախկին եկեղեցու շարժական գույքերը տեղափոխվեցին այնտեղ։

18 Պապական այս առանձնաշնորհումների վերաբերյալ կոնդակների ընդգրծող ներկայումս պահվում են Հոռոմի քահանայապետական Առնյան վարժարանում։ Մենք օգտվել ենք Ալիշանի կողմից արված կրկնօրինակներից, որոնք պահվում են նրա կողմից հավաքված «Դիւան հայոց պատմութեան» անտիպ փաստաթղթերի շարքում։

14 Ս. Ղազարի Մատենադարանի № 2742 ձեռագրում, ի թիվս այլ ձեռագրերի, կարված է նաև 1839 թ. Ս. Ղազարում արված (8 ապրիլի էջ) «Կանոնքը» Այս տպագիր «Կանոնքից» եւ մեկ օրինակ պահվում է Ղ. Ալիշանի անձնական դիվանում։ Ասենք, որ այս դիրքը, թեև Լ. Զերիյանի հոդվածում (սե՛ս Ե. Լ. Zekyan. Le colonie armene, p. 883) նշվելով մոտավեց շրջանառութեան մեջ, սակայն այդպես էլ մնաց շրջանառված մատենագիտական ցանկերում։

15 Տե՛ս Կանոնք որ վասն հիւրանոցի ազգիս Հայոց եկեղեցատան Սրբուհւոյն Մարիամու Եղիպտացւոյն, սահմանեցան ի վսեմափառ ծիրանաւորէն Պամփիլեայ ի պաշտպանէն մերմէ լամին 1774, Վեներիկ, Ս. Ղազար, 1839, էջ 2—7։

Հավատասփյուռ ժողովի կողմից 1839 թ. մարտի 12-ին վերոհիշյալ «Կանոն-րը» վերահաստատվեց ու նորացվեց արդեն Ս. Վլասի համար (Հավատասփյուռ ժողովի նախագահ, կարդինալ Հակոբ Փիլիպպոս Ֆրանսոնիի [Giacomo Filippi, Franson] կողմից): Փոփոխություն արվեց միայն 19 կետում, որը այժմ ձևակերպվեց այսպես. «Չե կթէ հարկ իցէ ումեք խօսել ընդ կանայս, ՚ի վարայարկ դաթի կամ յաւանդատան խօսեսցի ընդ նոսա: Ս. Վլասը մինչև այս դարի 20-ական թթ. պատկանում էր հալ համալնքին: Սակայն այն ես աստիճանաբար լքվեց¹⁶ և նեղակումս հանձնված է կույր մայրապետների միարանությունը:

1920-ական թ. Մարիամ Եղիպտացու եկեղեցուց և ղերեզմանատնից հանդիսանալով արձանագրությունները հանվեցին և տեղափոխվեցին Լեոնյան վարժարան, որ մի մասը բաժնու միջոցով է պատերի և քառակյտն սյուների մեջ, մնացածները (հիմնականում տեղափոխման ժամանակ փնտրվածները ու սրոշ արձանագրությունների բեկորներ) պահվում են նկուղում: Լեոնյան վարժարան տեղափոխվեցին նաև Մարիամ Եղիպտացի եկեղեցում պահվող հայերեն զրբերն ու ձևապատկերները, ինչպես նաև հայոց հյուրատանը պահվող պատկերներ փաստաթղթեր: Ձեռագրերի շարքում հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մարիամ Եղիպտացի եկեղեցու հայկական տոմարագրերը, որն անդնահատելի աղբյուր է Հոռմի հայոց և մասնավորապես այս եկեղեցու XVII—XIX դդ. պատմության ուսումնասիրման համար¹⁷:

1996—97 թթ. ձմռանը մենք Լեոնյան վարժարանում յուսանկարեցինք եղած բոլոր արձանագրությունները, նպատակ ունենալով Հոռմի հայերեն արձանագրությունների դիվանի պատրաստումը: Նախապես մեր ձեռքի տակ ունեինք նաև Մարիամ Եղիպտացի եկեղեցու արձանագրությունների այն դիվանը, որ 1772 թ. խնամքով հավաքել էր Մխիթարյան վարդապետ Ստեփաննոս Ասլիկյանը (1737—1807)¹⁸, Առավել կատարյալ օրինակ ենք համարում Վենետիկի Մխիթարյաններից հայր Անանիա Ջելալյանի (1790—1867) կողմից խնամքով արտադրված արձանագրությունների դիվանը: Այս դործը Ջելալյանի կողմից կատարվեց 1851 թ. մարտի 1—21-ը, Վ. Ալիշանի խնդրանքով¹⁹, Ա. Ջելալյանը տապանադրերին կցել է նաև եկեղեցու, հյուրանոցի ու պարտեզի ամենայն բարեխղճությամբ արված հատակագիծը, որը այսօր անհնար է արդեն ճշգրիտ կատարել, քանի որ Մուսլիմիի օրոք քանդել են՝ եկեղեցին հավելյալ շինություններից աղատելու համար: Ա. Ջելալյանի, Ս. Ասլիկյանի հավաքած արձանագրությունների քննությունն ու համեմատությունը պետք է տալիս, թե նրանց միջև ընկած մեկ դարից պակաս ժամանակամիջոցում ինչպիսի նշանակալի փոփոխություններ ու վնասներ կրեցին այս արձանագրությունները:

16 Ս. Վլասի 1832—1862 թթ. պատմության վերաբերյալ մեկ սովոր հատր փաստաթղթեր պահվում են Archivio storico della S. Congregazione „De Propaganda Fide“ (այսուհետև՝ API), Scritture riferite nel Congresso, Hoesolces բաժնում:

17 Ձեռագրերի նկարագրությունը տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց Հոռմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս և բա՛. Լեոնյան հայ վարժարանի, կազմեց Ն. Վ. Ալիշան, Վիեննա, 1961: Մարիամ Եղիպտացու Տոմարագրերը լայնորեն օգտագործվել է հատկապես Գ. Գալեմբեարյանի կողմից՝ իր աշխատություններում:

18 Տե՛ս Ս. Վազարի Մատենագարան, ձեռ. № 2721: 93 փորագրի կշիռից բաղկացած ձեռագիրը ընդգրկում է նաև Հոռմի այլ եկեղեցիներում ու վայրերում եղած հայերեն արձանագրությունները:

19 Տե՛ս Ս. Վազարի Մատենագարան, ձեռ. № 2746: 21 թերթանոց այս ձեռագրի սկզբում գտնվում է եկեղեցու և հյուրատան հատակագիծը:

Ասեմք նաև, որ մի շարք արձանագրություններ տարրեր տարիներին հրատարակվել և քննվել են Տ. Գ. Գալեմբարյանի²⁰, Տ. Սահակ Ճեմճեմյանի²¹ և այլոց²² աշխատություններում:

Անդրադառնալով բուն արձանագրություններին, որոնց քանակը յոթ տասնյակից ավել է, ասեմք, որ նրանց հիմնական մասը հայերեն է, փոքր մասը՝ երկլեզու է՝ յա:տիներեն-հայերեն, առավել շնչին մասը՝ միայն լատիններեն: Տապանագրերի մեծ մասը նախկինում գրված է եղել Մարիամ Եզրիպտացի եկեղեցու հատակին, գերեզմանների վրա, սկսած ավագ սեղանից մինչև դուռը և եկեղեցու աջ կողմում: Ժամանակագրորեն ամենահին, թվով երեք տապանագրերը (Մարդիս Անկյուրիացու [1568], Նուրիճան Ջուղայեցու [1578] և Մարգարի որդի Պողոսի [1594]) XVI դարից են: XVII դարից պահպանված արձանագրությունների թիվը հասնում է մոտ 18-ի: Դրանք են՝ Կ. Պոլսի Հովհաննես Խույ պատրիարքի, Նախիջևանի հայ կաթողիկ թեմի առաջնորդ Ազարիա արքեպիսկոպոս Ֆրիդոնի, Առաքել կաթիկոպոս Շոռթթեցու (Բուպիկ), Զաքարիա Աղամի, Բարսեղ Բարսեղյանի (հայտնի որպես Don Basilius Barsegh) և այլոց տապանագրերը: Ամենամեծ քանակությամբ արձանագրություններ պահպանվել են XVIII դարից: Դրանցից նշելի են Սսի Աղարիա Կարկառեցի կաթողիկոսի, Մարիամ Եզրիպտացու ձեռնադրիչ կաթիկոպոսներ Գրիգոր արքեպիսկոպոս Եղեսացու, Վրթանես արքեպիսկոպոս կեսարացու, Հովսեփ արքեպիսկոպոս Ստեփանյանի, Սիմոն Ումուտյանի, Պողոս Լևոնյանի, Ստեփանոս Ավթանդիլյանի և այլոց տապանագրերը: Արձանագրությունները հնարավորություն են ընձևում պարզելու Հոռմում հաստատված հայության բնակության նախնական վայրը: Վերջինիս աշխարհագրական սահմանները բավական լայն են՝ Պոլիս, Անկյուրիա, Թոխաթ, Երզնկա, Ակն, Սասուն, Տիգրանակերտ, Սեբաստիա, Եղեսիա, Հայեպ, Թիֆլիզ, Գորի, Ախալցխա, Նախիջևան, Զահուկ, Ապարաններ, Թավրիզ, Զուղա և այլն: Թաղվածների բացարձակ մեծամասնությունը տղամարդիկ են: Տապանագրերի զգալի մասը, ի տարբերություն Վենետիկի հայոց Սուրբ Խաչ վանքի տապանագրերի, պատկանում է զխավորապես հողերականների, այն դեպքում, երբ Վենետիկում գերակշռում են աշխարհականները: Այստեղ թաղված աշխարհականները, որոնք հիմնականում Հոռմ ուխտի եկածներ են պատմակա: Հայաստանի տարբեր շրջաններից, քանակով ավելի քիչ են:

Այլ առիթի թողնելով Հոռմի հայոց թողած արձանագրությունների դիվանի հրատարակումը, այստեղ անդրադառնանք այդ արձանագրություններից մի քանիսին:

Մարիամ Եզրիպտացու եկեղեցում և հյուրատան արձանագրությունների մեջ առանձնանում է Սսի Աղարիա կաթողիկոսի տապանագիրը, դատելով որից վերջինս պետք է ծնված լինի 1617 կամ 1618 թ.: Սսի Սարգիս Ա Քիլիսցու հակաթու կաթողիկոս Ազարիա Կարկառեցու (կոչված նաև Ղաթրեմիզ, Գանրպայանց, ավելի ուշ՝ Ղարիպ) կաթողիկոսության ասրիները Հ. Անասյունի հաշվումներով պետք է համապատասխանեն 1670-ական թթ.: Վերջինիս հաշվումներով Աղարիուն պետք է Հոռմ ապաստանած լինել մոտավորապես

20 Տե՛ս նրա Կոլոտ Յովհաննէս պատրիարք (Վիեննա, 1804), Սարգիս արք. Ստրաֆեն և ժամանակին հայ կաթողիկոս (Վիեննա, 1908), Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկոս (Վիեննա, 1915) աշխատությունները և այլն:

21 Տե՛ս նրա ծանոթագրությունները՝ Հովհաննէս Ա պատկերահան. Նամականի (1695—1758) (Վիեննա—Ս. Ղազար, 1988) գրքում:

22 Տե՛ս «Որոգրութիւն Ս. Վլասի (կարեօր տեղեկութիւնը Հոռմի հայոց մասին)».— «Ավետիք», 1966, էջ 104—110, Սսի երկու կաթողիկոս թաղված ի Հոռմ՝ Աղարիա Կարկառեցի (մահ. 1710), Մատթեոս (մահ. 1727).— «Ավետիք», 1951, էջ 51—53, Հովհաննէս արք. Թասպասի տապանագրի հրատարակությունը տե՛ս «Ավետիք», 1950, էջ 87—88:

1683 թ.Ք. Հոռմ մեկնելը ևս մինչ այժմ հալածության մեջ ներկայացված է ոտպես այս կաթողիկոսի լատինամետոֆուն. ելնելով Աղարիա Կառկառեցու լավ հարաբերություններից միսիոներների հետ²⁴: Մեր ձեռքի տակ եղած արխիվային փաստաթղթերը օգնում են հստակելու մինչ այժմ առաջ քաշված այս թեզերը: Այսպես, նրանք վկայում են, որ տակավին 1684 թ. կեսերին Աղարիա Սսեցին ղեկ Ռուբրիատում էր: Հայկափ վեդառավոր (կապուղին) հոսրակտններից Giustiniano de Nery-ն Կոնստանտինոպոլիսի հավատակից հայր Cifovanni Patrillo ին զրած 1681 թ. օգոստոսի 5-ի նամակում հաղորդում է, որ իր նամակարիորդ՝ որ կոչվում է Սսի Աղարիա պատրիարք՝ հայ է: Արժանի է լավագույն ընդունելության լատինների կողմից, քանի որ հայտնվել է դժբախտության մեջ: Իր լավ օրերին Հայկափ արքեպիսկոպոսն էր, ապա կաթողիկոս. այս երկու պաշտոնները ամենան առժանավորությամբ վարել է 18 տարի, որի մասին կարող է վկայել անձամբ Հեյրոպոլիսի եպիսկոպոսը (նկատի ունի նշանավոր Ֆրանսուա Պիկեին—Մ. Կ.): Բայց Աղարիան հատկապես հայտնվել է Աղանայում, ուր սեղի փաշան, սենեկով, որ նույնիսկ կախել սալու հրամանով չի կարողանում վերջինիս մահմեդականություն ընդունել տալ, հրամայում է նրան փայտի 400—500 հարված հասցնել, որից հետո մահամերձ և ուշաօրե կաթողիկոսին թյալատում են և ազատ արձակում: Անհաջողության է մասնավոր Աղարիայի կողմից Պոլիս՝ Բարձր Դոանը դանդաղալից փորձը: Այստեղ հայերի գլխավորները, վախենալով, որ դա երևի դեմ հայաձանքների առիթ կհանդիսանա, նրան խորհուրդ են տալիս մեկնել Պարսկաստան: Էջմիածնում մի քանի եպիսկոպոսներ պատճառաբանելով, թե եթե պարսիկները իմանան իր թյալատված լինելը և եկեղեցի մրտնելը՝ ապա հայաձանքներ կսկսվեն հայերի դեմ՝ խորհուրդ են տալիս նրան սեղի հայոց միճակը իր թյալատված լինելով ավելի շքարդացնել և մեկնել քրիստոնյա նվիրույթ²⁵:

Գաղտնիով Հոռմի Հավատասփյուռ ժողովի դիմանում պահվող Սսի Աղարիա կաթողիկոսի «րնդարձակ և ծածուկ պատմությունից»²⁶, որ թվագրված է 1681 թ. դեկտեմբեր 12-ով, ենթադրելի է, որ նա Հոռմ հասավ միայն այդ ժամանակ Այս փաստաթուղթն ըստ էության Աղարիայի դեկուցագրին է իր հետ կատարված բոլոր իրադարձությունների մասին, որ նա գրել է Հոռմ հասնելուն պես Հավատասփյուռ ժողովի պահանջով, Համենայնդեպս, հաջորդ իսկ տարին նա արդեն Հոռմում քահանա է ձեռնադրում նեպոլի թատվորությունում Քոմաս Վանանդեցու կողմից սարկավաղության ձեռնադրությունը ստացած ոմն «վրացի հայ» (armeno georgiano) Հովհաննես Զայեին²⁷: 1692 թ. Աղարիուն ինչ-ինչ խնդրագրի է ներկայացնում պապին, որի կապակցությամբ Աղարիայի մասին հարցում է արվում Հոռմում հայերենի պաշտոնական թարգմանիչ և մոլի լատինամետ Բարսեղ Բարսեղյանին (Don Basilio Barsech): Վերջինիս պատասխանից պարզ է դառնում, որ Աղարիան այս նամակով Հոռմի իշխանություններից խնդրել է բարելավել իր կյանքի պայմանները: Իր լատիններեն նամակում²⁸, թվագրված 1692 թ. մարտի 12-ով, Բարսեղ Բարսեղյանը հաղորդում է, որ Աղարիայի կողմից պապին ներկայացրած թուղթը ճշմարիտ է՝ Աղարիան, լինելով Սսի կաթողիկոս, իրեն ևս կոչում է Ամենայն Հայոց: Բարսեղը այնուհետև ճշգրտորեն շարա-

²³ Հ. Ա. Ն. Ա. Ն. Ա. Ն. Հայկական մատենադիտություն. հ. Ա, Երևան, 1959, էջ 263:

²⁴ Նույն տեղում, հմտ. Ա. Մյուրմելյան. Պատմություն Հայկափի հայոց. հ. երկրորդ (1355—1908), Փարիզ, 1950, էջ 621—627:

²⁵ Տե՛ս APF, Miscelanea generalit. vol. XII, f. 231—232:

²⁶ Տե՛ս նույն տեղում, vol. XI, f. 308—313:

²⁷ Տե՛ս նույն տեղում, SOCG, vol. 472, f. 139, հմտ. Acta, 1685, m1720 12, vol. 55, f. 28, n. 10:

²⁸ Տե՛ս նույն տեղում, SC Armeni, vol. 4, f. 217rv+218r.

որում է Աղարիայի հետ կատարված դեպքերը, իր կողմից ավելացնելով որոշ նորութուններ: Այսպես, ըստ նրա, Աղարիան պարտք էր թուրքերին և քանի որ չկարողացավ վճարել, ապա թուրքերի կողմից նրան առաջարկվեց ուրանալ հավատարձ ազատվելու համար պարտքերից: Աղարիայի մերժումից հետո, թուրքերը հրապարակորեն (publice) թլպատում են նրան: Մի քանի ամիս րժշկվելուց հետո Աղարիան մեկնում է Մեծ Հայք՝ էջմիածին, Նղիազար կաթողիկոսի մոտ: Սակայն վերջինս չի ընդունում նրան, վախենալով մահամեղական պարսիկներից: Այստեղ էլ նրան խորհուրդ է տրվում մեկնել քրիստոնյա ծվրոպա: Այնուհետև Աղարիան վերադառնում է Հայեպ և ապա վերցնելով հանձնարարական դրութուններ Հայեպի միսիոներներից՝ մեկնում է Հոռմ, ուր բնակվում է հայոց հյուրանոցում, ստանալով նաև Հավատասփյուռ ժողովի կողմից նշանակված թոշակը: Բայց չզոհանալով սրանով, իր հուշագրով այժմ ավելին էր ուղում:

Որպես Աղարիայի խնդրագրի դրդապատճառներ Բարսեղը նշում է, որ ա) մարդս ազաճ է և միշտ ավելին է ուղում, բ) եկեղեցին էլ ռարյաղկամ է և միշտ օղնում է իրեն դիմողներին, գ) Աղարիային հատկազրված հարկաբարձի իրեն բավական չէ, քանի որ ծառայի հետ միասին են ապրում և էնդութուն է, դ) նա տեսնում է այստեղ նաև այլ եպիսկոպոսներ, որոնք իրենից պաշտոնով ցածր են, բայց ապրում են իրենից բարվոր վիճակում. օրինակ, Լեհաստանից Աստվածատուր (Deodato) եպիսկոպոսը, Արիստակիսը՝ որը Հայաստանում քահանա իսկ չէր, իսկ այստեղ դբաղեցնում է պատի լավատույն մասր:

Ապա Բարսեղը եղրակացնում է՝ եթե հնարավոր չէ Աղարիայի համար ավելին անել, ապա թող կարգադրվի, որ Ֆրանսիայի թաղավորից հրաման վերցվի նրա համար՝ վերադառնալու իր աթոռը՝ Թուրքիա: Աղարիան այս խնդրանքը մի անգամ ևս առել է և մերժվել: Կամ էլ կարելի է պալատի լավագույն մասր հատկացնել նրան:

1701 թ. Աղարիա Կաթողիկոսը Լիվոռնոյի հայոց կողմից հատուկ խրնդրագրով հրավիրվեղ օձելու նոռանառույց հայկական եկեղեցու հիմքերը: Այն օձվեղ Ագարիա Ղարիպի և տեղի մեծ դուքսի անմիջապառն մասնակցութլամբ²⁹:

Աղարիա կաթողիկոս Ղարիբի ստորև բերվող լատիներեն-հայերեն տապալառի՝ որ, փորագրված շքեղ մարմարե քարի վոա, վկայում է, որ վերջինս մահաղեղ է 1710 թ., 92 տարեկան: հասակում: Հաւերեն հատվածը արղեղ իսկ XIX ուարի կեսին կոտրված էր, որի բաղում մասերիղ հնարավոր չէր բիշ թե շատ նոռմալ ընթերցում: Բերում ենք XVIII դարում Ստեփանոս Ասլիկյանի ընթերցումը³⁰:

D O M

AZZARIA CARIB ARMENIAE MINORIS
PATRIARCA SISSENSIS
OB MORUM DULCEDINEM
AC EPETICORUM OPPUGNATIONEM
SANCTAE FOMANAE ECCLESIAE CARUS
ET DIU IN URBE MUNIFICATUS
NONAGENARIO MAJOR
REQUIEVIT IN DOMINO
DIE XXIII. MAJ. MDCCX

²⁹ Տե՛ս Մ. վ. Ուղուրլեան. Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ նոցա. Վենետիկ, 1891, էջ 74—75: Աղարիան եղել է նաև այս եկեղեցու կառուցման համար դիտավոր խնդրարկուներից մեկը (տե՛ս օրինակ G. Vivoli. Annali di Livorno dalla sua origine sino all' anno di Gesu Cristo 1640. Vol. 4, Livorno, 1946, p. 358).

³⁰ Տե՛ս Մ. Ղաղարի Մատենադարան, Ձեռագիր Ձ 2721, Թերթ 38—39:

ՏԱՊԱՆՍ ԱՅՍ Է ՀԱՆԿՍՏԻ ԱԶԱՐԻԱՅ ԿԱՌՈՒՂԻԿՈՍԻ
 ԿԻՒԿԻՈՅ ՏԱՆՆ ՍԸՍԻ, ՀԱԼԱՆՍԿԱՆ ԵՂԵԱԼ ԱՆՏԻ
 ՎԱՍՆ ՀԱԻԱՏՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԻՄԵԱՅ ԱՌ ՍԴՈՒՐԵ ԵԿԵԶԵԼԻՅԻ
 ՈՐ Է ՍՏՈՅԿ ՄԱՅՐ ԿԻԱԼԻ, ԵԿԱՅ ԱՍՍ ՔՍԱՆ ԵՒ ՎԵՅԻ
 ԸՆԴՍՈՒՆ ԵՐԿՈՒ ԱՄՕՔՆ ԼԻ ՀԱՆԿԵԱԿ ԱՌ ՏԻ ԷՂԻ ԻՐ ՅԼԱՆԿԻԱԼԻ
 ՄԱՅԻՍ ԱՄՍՈՅ ԻՐ 22 ՍԻ
 ՈՉԺ 1710 ՅԻ:

Մարիամ Եղիպտացի եկեղեցում թաղված հայ հոգևորականների մեջ իր դիրքով ու ցործունեությամբ առանձնանում է նաև Կ. Պոլսի Հովհաննես Խույ պատրիարքը (1554—1634), որը Հոռոմ ապաստանեց 1632 թ.: Չանգրադառնալով նրա արդեն բավականին ուսումնասիրված կենսագրությունը³¹, ասենք, որ Հոռոմի Հավատասփյուռ ժողովի դիվանում պահվում է Հովհաննես Խույի կողմից գրված հայերեն զարգանախոս և անթվակիր մի փաստաթուղթ, որը, դասկարգվ կից դանվոդ, ժամանակին արված իտալերեն և լատիներեն խորամանկություններից, զրվել էր ղեռնա 1624 թ.³²: Այս փաստաթղթում Խույը, դիմելով պապին, գրում է. «...ընկալ քույին բնական սիրով և գթովն հայր սխուրջը դադաշանս ծառային քո, որ մեք ի յայս բազմավիշտ և անհանդիստ երկիրո, որ կամք միշտ և հանապաղ զմեզ կու նեղացնեն. եթէ մեր հաւատոյս պատճառաւ, եթէ դհարկս բաղումս պահանջելով զմեզ կու վիրատրեն. այլ ոչ դիրք մնաց, ոչ եկեղեցւոյ սպասք, ամէնն զրաւեցաւ զրստակն ի այլ լաղղիքն տվար և ոչ եմք հանդիսաւ Վասն որոյ, հայր սխուրջը, այլ ապրանաց ճար շմնաց մեզ ի յայս տեղս: Եթէ դուրսն է այլ աշխարհքն և երկիրքն նորա այլ այլ աւերեցան. ոչ վանք մնաց, ոչ եկեղեցին, ոչ քրիստոնեայք, ամէնքն ի նեղութիւն և տառապանք կան, և մեր զայս ամենայն բաշխով և զայս տեսանելով, կամք արաք մեք և մեր խորհրդակից կարգաւորօք առ սըրբութեան ձերոյ վայ, բայց ոչ եմք տեղեակ եթէ զմեր անարժանութիւնս կու ընդունիք մի և դու, սուրբ հայր, քեզնէ կու խնդրեմ, որ մեզ յայտ տեղք քրիստոնէարնակ երկիրս եկեղեցի մի կամ պատշաճաւոր տեղի մի որպէս կու վայելլ փառացղ եթէ տաս նայ, մեզի քո սխուրջը արհնութիւնդ նամակաւ ծանուցանես, որ ելնքնք դանք և այս անօրինաց ձեռաց ազատիք և զքեզ հանապաղ արհնող լինինք, որ այսպիսի վշտացս զմեզ ազատ առնես»: Հովհաննես Խույի բավական մաշված տապանագրի վրա լատիներեն գրությունից հետո քանդակված է իր կնիքը, կողքերին՝ հայրապետական գավազանը և ցուպը: Երկաթագիր տառերով հայերեն արձանագրության ամեն տողից հետո փծ է քաշված: Ստորեւ բերում ենք տապանագրի հայերեն հատվածը.

Ի ՆԵՐՔՈՅ ԱՅՍՐՄ ՎԻՄԻ, ԵԴԵԱԼ ՄԱՐՄԻՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ,
 ՀՈՎԻԻ ՀԱՅՐ ԵՒ ԱՌԱՆԴԻ, ԵՐԱՆԵԼԻ ՔԱ ԵՒ ՀԵՌԵՏՈՐԻ,
 ԱԼՄՏՈՒԱԼ ԽԱՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՄԵԾ ՔԱՂԱՔԻՆ ՍՏԱՄՊՈԼԻ,
 ՅԱՂԹՈՂ ԵՒ ԶՈՐ ՊԱՏՐԻԱՐԿԻ, ԱՆՑԵԱԼ ԱՒՈՒՐՔ ՈՒՌՍՈՒՆ ԱՄԻ,
 ԵԿԵԱԼ ՀԱՍԱԿ ԱՅՍ ՍԴՈՒՐԵ ՏԵՂԻ, ՀՆԱԶԱՆԴԵՑԱԿ ՍՐՐՈՅՆ ԲԱՐԻ,

³¹ Այդ մասին մտերամասն տե՛ս Գ. Գալեմբեարյան. Կենսագրություններ երկու հայ պատրիարքների..., էջ 1—41, Հմմտ. Ա. Ալպոյան. Գրիգոր Կեսարացի պատրիարք և իր ժամանակը. Երուսաղեմ, 1936, ն. վ. Ա. Կիսյան. Մովսես Գ. Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը. Վիեննա, 1936: Պատրիարքի տապանագրի հրատարակությունը տե՛ս նաև Վ. Քոբզոմյան. Կ. Պոլսո հայ պատրիարքներու տապանագիրները.—Շրագմավագ, 1918, էջ 169:

³² Տե՛ս APF. SOCG, vol. 181, f. 101r v—105r (լատիներեն թարգմանություն), 106r (հայերեն ընթացիկ), 107r v (իտալերեն թարգմանություն):

ՈՒՔՆԵՐՈՐԳ ՄԵՆ ՈՒՌՈՒՆԻ, ԼՂՅԵԱԼ ԶՓԱՓԱՔ ԻՒՐՈՅ ՍՂՐՏԻ,

ՀԱՆԿԵԱԼ ԶԱՍՏՈՒՄՆԵՐ ՓԱՌՈՔ ՀՈՒԻ: ԹՎ/Ա.]ԿԱՆԻՍ ՄԵՍ ՀԱՅՈՅ ԱԶԿԻ,

ՀԱԶԱՐ ՈՒՔՍՈՒՆ ԵՒ ՆՐԵՔԻ, ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՅ ՏԱՍՆ ԵՒ ՆՐԵՔԻ,

XVII դարի արձանագրությունների մեջ ուշագրավ է Աղարիա Ֆրիդոնի տապալահարը: Վերջինս ծագումով սախիջևանի հայ կաթողիկոսների (ունիթորնների) եպիսկոպոսանիստ Ապարաներ գյուղից է: Նախիջևանի թուրքական օկուպացիայի տարիներին, զավառում թուրքական հարստահարությունների ու հալածանքների ծայրաստիճան սրումից հետո, նախիջևանի հայ բնակչության ավազանու կողմից սրված հանձնարարականներով ուղարկվեց Հոռոմ, Աղդպիսի դրուժություններից մեկը, թվագրված 1602 թ., հասցեագրված էր Հալիսյում հաստատված ազդեցիկ ջուղայեցիներին և նախիջևանցիներին: Հիշյալ գրությունը, որ իր հետ տարավ Աղարիան, մահից հետո, նրա մոտ մնացած բոլոր խղթների հետ միասին ներկայումս պահվում է Վատիկանի արխիվում¹³: Վերջինիս բովանդակությունը ապացույց է այն ծանրություն վիճակի, որի մեջ գտնվում էր նախիջևանը 1579 թ. սկսած՝ թուրքական օկուպացիայի տարիներին: Հաշվի առնելով այս փաստաթղթի կարևորությունը, ինչպես նաև Հին Հուղայի պատմության ազդեցիկ սակավությունը, ստորև այն բերում ենք ամբողջությամբ.

«Ը Ուրբ Ամենափրկչէ և ի սցիին սպասաւր ՏԼԵ Ագարիայ եպիսկոպոս, տէր Մաարէսս եպիսկոպոսէ և ի սուրբ Եկորեայ Զաւալմարէ՝ տէր Յակոբէ, տէր Անանիայէ, Վերին Կարանին, Սուրբ Ամենափրկչէ, Սուրբ Աստուածածնէ, Ներհին Կարանին Սուրբ՝ տէր Թարղղիմևոսէ, տէր Մանուէլէ, Ներհին Կարանեն Սուրբ՝ տէր Հայրապետէ, տէր Պետրոսէ, Կարայաճախին, Սուրբ Սարգսէ՝ տէր Ներսէս, տէր Պողոսէ. Աստուածածնին՝ տէր Հայրապետէ, տէր Յովաննիսէ:

Ի Զուղայոյ վանուաց, Եկեղեցացս և ի սուրբ ուխտայ տեղացս և ի սցիին սպասաւորացս. ի տէր Ագարիայ եպիսկոպոսէ, ի տէր Մարէսս եպիսկոպոսէ ես առանկ. մեծամեծք աւաճ կարգաւորէ ի տէր Թարղղմէս կարգաւորէ. ի տէր Մանուէլէ, ի տէր Հայրապետէ, տէր Պետրոսէ, տէր Ներսէս, տէր Պողոսէ. տէր Յակոբէ, տէր Անանիայէս, տէր Հայրապետէս, տէր Յովաննիսէ և ի տէր Մխիթարէս և այլ ամենայն սցիին սպասաւորէ և այլ մեծայմեծք և փոքր այգոյն քահանայոցէս.

Զուղայոյ ջամիարէն, զաւովարայվորացէ խաւջայ եպիսկոպոս, խաւջայ Ոսկանէս, Նուրէս, Շահվալէս. Փիրամարէս և այլ հազր ջամիարիցս հասցէ բարով ողջուն և համբուր սրբութեան մեր հապետ եղբարացոս և որդոցոս. Հալապայ ջողեցի զաւովարաւորացս և ձեր հազր ջամիարիտ, ջուլեցի բաղրկանէրացս, որ տոր հազր կտփ այտ տեղտ. հարցանեմ գեղգ ի բարին ժիրէք ստուլ խաղապետար ի շարշարանացն ժամանակիս. թէ զմեզ հարցման սրժան առնէք կամ բստ արժանացն մերոց. ծանուցում լինի ձեզ մեր հոգևոր եղբարք և որդիք ջուղայոյ ջամիար. որ կայք քի յայտ տղոս. լիմացեք որ էրընջակայ ձորին մեծայմեծք բոլոր ալկէն ամենեկան՝ թէ քահանայ. թէ աշխարհականեք. ամէն բոլորեցան. տէր Ագարիէն. որն Նիկալ արեպիսկոպոսին աշակերտէր. վաքիլ արարին, ընտրեցին. ողորկեցին: Մեր վկայութեամբն ի ձեր ողորմութիւնն. որ թէ ինչ զստար Եկեղեցոյ՝ խաչ, աւետարան, սկի. ջուրջառ, մուլք. ջաղայց. ասարանոց. իգի յաւ մշում որ կայ. ամէն անարիեաց բուրհի սեռում գրաւ այ. յէնց տասալանք. Կնց վիշտ յէնց Եկեղեցիներն. որ ետայ են. ոչինչ քրիստոնայ. գունչ տեսնու մեզ յաստուծոյ Թ [2] ամիսն Դ [3] ամիսն կանցանի ոչ ժամ կուլնի. ոչ պատարագ: Մեզ յայտնի կսու որ ըստուգ այնպէս այ. Եկին մեզ մատ ծանուցում արարին: Մեք այլ գրեցաք, մեր վկայութեամբն ոլորկեցաք մատ ի ձեզ, որ թէ դուք էլ կանգնէք. գնէք զանսուլն մատ, ո գալովարաւորեն մատ. բաղրկանէրն մատ, ամէն ըստուգ ծանուցում արարէք. թէ այս բանըս մեզ յայտնի այ. զորոգ այ. մեր վկայութեանովն գուր էլ վկայեցէք տեղտ, իրան ըստուգն.

¹³ Տե՛ս Archivium Secretum Vaticanum, Fondo Borghese, Serie III, 124D, f. 49rv. Փաստաթղթերի իտալերեն թարգմանությունը տե՛ս նույն տեղում, f. 25 rv.

նուցսն ծանուցում արար էք. հայրաք և հայրաք. քէ աստուծոյ խարին համար այ. քէ մէք խարին համար այ. քէ արինաց խարին համար այ. զոմ էլ լաւ կանգնեցէք տուր ողորմութիւն տվլք. որ նախարհի խարնի անի. աստուծոյ խարերն համար այտոնց լաւ ծանուցում արարէք. ինչպէս որ տղա ս. մեզ ծանուցում էրաւ մեր Արտոնի վկայութեամբն. մեր կայսրոսրէն վկայութեամբն. մեր շեկեղեցացն Բահաւայից մեծ և փոքրի վկայութեամբն: Ամենն յիմացանք որ զայտ տէր Ազարիտ ընտրեցին պրոպն ի նւոն տվին ազարեկցին՝ արեկ: Չանում որդիք ջանում եղբայրք յասխարութիւն շանէք. հայրաք հայրաք քարոզայ քըլ շանէք. լաւ կանգնեցլք. կատարեցլք:

Պիտի որ մեր պատնառան զոմ զնէք զանսույն մատ. վկայութիւն տէք զանսույն զիր ասէք: Եւ զրիս նմաստընովն, տէք ի տէր Ազարիէն սեռն, որ զնայ ի Լեւոն Հոռմ. որ է Արտոն Սուրբ Առաքելոցն Պատրոսի և Պողոսի. որ նոր կայսրոսրն զանայ. զայ. որ վանէք. յեկեղեցի. զեղ. զատոն, ժողովուրդն. լաւմէն խիստ անտէր ան մեացլք:

Գարնէլայ Ջողայոյ յաւրարք՝ յայտուրէս՝ Խոշիկէս. Շահվալէս. Փիրամէս. և այլ հագր ջամխարիցս. բարեյ հանէք... մեր հոգեւոր եղբար որդի զայաւանտո՝ եղբարխո. Չասղարէ, որ կոչի Լուսաբայ և այլ ընկերացտ և ի ձեր ջումխարիտ որ ի տէր Ազարիէն ողորկեցին մատ ձեզ. պիտի որ կանգնէք զայտ բաներուս որ զրած ալ. լաւ կատարէլայ զրոխ ասնէք. ջանում որդիք ինչ որ զուայ կտուր. բաւ և քէ մեզ էք արարէլ հայրաք և հայրաք. յաղայ քըլանէք. լաւ կանգնեցլք. կատարեցլք. Թաւ է:

Գրեցաւ ի զիրս ի յովականիս հայոց ԽՅԱ ի 1602 ի հրոտից ամսոյ յ 10 ամի յիւրայ ամսոյ ամսի ժև ի 11 յտակերատու Բշարաք. ամ էք:

Ազարիտն 1604 թ. Հոռմում ձեռնադրվեց նախիջեանի կաթողիկ թեմի կայսրոսրն: Այս ժամանակ էլ նա պապին հանձնեց մի Տեղեկագիր («Relazione dell' Arcivescovo Frat' Azaria Fritone Armeno dell' Ordine di S. Domenic. ») Արարատայն երկրի ու հատկապէս նախիջեանի վերաբերյալ: Դժվար է զերագնահատել այս զեկույցի կարևորութիւնը, բաւ է որ այն արտացոլում է նախիջեանի ու նրա զլուրերի անտեսական, վեճակադրական պատկերը Շահ Արասի բռնապաղթի ճիշտ նախորդին³⁴, Աղբյուրագիտական ուսումնասիրու-

34 Խոսքը Հալեպում վենետիկյան հանրապետության հյուպատոս Անտոնիո Կորերի (Antonio Corer) մասին է, որի 1603 թ. 25 փետրվարով թվագրված ու կնքված հանձնարարական գիրք, ուղղված պապին, Ազարիտային փառաբանելով հարգովի է ստանալու Այն եւ Ազարիտայի մյուս թղթերի հետ պահվում է նույն հաստիքում (Archivio Sec. eum. V. a. i. u. r., Fondo Borghese, Serie III, 1241 f. 5)

35 Այդ Տեղեկագրի հայերեն ընդդրոմ մինչ այժմ չի հայտնաբերվում: Հայագիտությանը հայտնի է այս ընդդրոմ թղթերին թարգմանությունը՝ կատարված XVII դարի սկզբին Գրեկեցի Գրամիսայի ձեռքով (տե՛ս Bre. e descrittione dello stato della cristianità e della religione di S. Domenico nella provincia d'Armenia. Cava. a dall'antichi Scrittori e della moderna relatione ca. a dal Reverendissimo monsignore Fr. Azaria Fritone Armeno Arcivescovo di Naxivan Domenicano a N. S. Papa Clemente VIII l'anno MD. LIII. Per il R. P. Fr. Domenico Gravina di Napoli, Roma, MDCV [1605]): Այս հարգավայրու պիրքը գիտական շրջանաստիճան մեզ զրովեց Գ. Ալիշանի կողմից (տե՛ս Արտական, վենետիկ—Ս. Ղազար, 1893, էջ 393 և հտ.): 2. Անասյանը (Հայ մատենագիտություն, հ. Ա, էջ 285) այն չգտնելով Քուրանի և էրզարգի կողմից կազմված նշանավոր մատենագիտության մեջ, սխալմամբ մատնանշում է Գ. Գրամիսայի այլ գրքերը: Մեր տրամադրության տակ կա այս հետախոյ գրքի միկրոմատյովներ, որ շնորհակալությամբ ստացանք Գարրիելա Ուլուհոյանից և Աննա Շիրինյանից: Գրքի մեկ այլ օրինակ 1986 թ. ձմռանը գտանք Հոռմում՝ Հավաասփյուր ժողովի զրադարանում: Ազարիտ Ֆրիտոնի Տեղեկագրի վերջին, գիտական հրատարակությունը, կատարված պահպանված լուսիններն թարգմանությունների և Հոռմի կարմիրտների գիտնում հայտնաբերված համեմատարար լիարժեք օրինակի հիման վրա տե՛ս La Relazione d'Armenia di Mons. Azaria Friton O. P.--Ephemerices Carmeliticae. Roma, XI, 1960, pp. 416 - 449.

թշունը ցույց է տալիս, որ Աղարիա Ֆրիդոնի այս զեկույցից լայնորեն օգտվել են XVII դարում Արևելք այցելած բազում եվրոպացի ուղեգիրները⁸⁶։ Ապա Աղարիան ուղեորվեց ուխտագնացության Իսպանիա՝ Կոմպոստելայի Ս. Հակոբի վանքը։ Այնտեղից նա, պորտուգալացի գոմինիկյանների հաղորդման համաձայն, ծրագրել էր անցնել Հնդկաստան, որտեղից էլ պիտի վերադառնար իր թեմը⁸⁷, սակայն, քանի որ 1606 թ. Լիսաբոնից դեպի Գոա գնացող նավերը չկարողացան ճանապարհ ընկնել Լիսաբոնը հոլանդական նավերի կողմից պաշարման մեջ լինելու պատճառով, Աղարիա Ֆրիդոնը Հռոմ վերադարձավ, ուր և հաջորդ տարին վախճանվեց ու թաղվեց Մարիամ Եգիպտացի եկեղեցում։ Աղարիայի տապանազարի հատկապես հայերեն տառերը շարիազանց մաշված են և հաղիվ են ընթերցվում։

D O M

F. AZARIAE FRIDONIO ARMENO
ORDINIS PRAEDICATORUM
PUI PRAESENS A CLEMENTE VIII PONT. MAX.
CREATUS ARCHIEPISCOPUS NAXIVANENSIS
VII. ID. MAII. MDCIV
CUM INDE MOX. EX HISPAN. VEDIISSET. IIII.
OBIIT VII. ID. IANUARIII ANNO AETATIS SUAE
XLV. SALUTIS MDCVII.

Տ[Է]Ր ԱԶԱՐԻԱ ՖՐԻՏՈՆԻԱ ԱՌՔԵ[ՊԻՍԿՈ]ՊՈՍ ՆԱԽ
ՃԻՎԱՆՈՒ Ի ՄԵՍ ՀԱՅԱՍՏԱՆ.

NICOLAUS FRIDONIUS FRATRI CARISSIMO
QUO LOCO IS VIVENS SIBI SEPULCHRUM
DELEGIT

P.

1688 թ., իր ունեցածը Մարիամ Եգիպտացու եկեղեցուն կտակելով, Հռոմում մահացավ Զաքարիա Աղամ հայ վարդապետը, որը, դատելով տապանազարի այն տեղեկությունից, թե մահացել էր 77 տարեկանում, պետք է ծնված լիներ մոտ 1611 թ. Արևելյան Հայաստանում՝ Սյունիքի Բնունիս գյուղում։ Հայագիտությանը Զաքարիա Աղամը հայտնի է առաջին հերթին եվրոպայում իր տպագրական գործունեությամբ ու եվրոպական արքունիքներում Հայաստանի ազատագրական նպատակներով դեգերող խոջա Շահմուրադ Բաղիշեցու այս հաղորդումից. «Ի թվին Հայոց ՌՃԼԲ [1132], փետրվար ամսոյ Բ [2] ատորն, ես Բաղիշեցի Մահտեսի Շահմուրատս գնացի ի թագաւորանիստ քաղաքն Վէրսայիայ, տեսայ զԹուրքունչի Յովհաննէս վարդապետն, Սիսիակցի Զաւարիա վարդապետն, Հայապցի Ղազարոսի որդի Զուգէփն, Արզրուցի Յովանէսի որդի Գրիգորն, Ղազանչեցի Մուրատն, Ոսկան վարդապետի քվեր որդի Սողոմոնն։ Նա և յեսաք զՖրանկսիզու թագաւորն, զկինն,

⁸⁶ Այսպես, Տավերնիեի նշանավոր արտահայտությունը (J. P. Tavernier. Les six voyages..., T. I, Paris, 1962, p. 39), թե Թավրիզից Թոխաթ ամեն մահմեդականի դիմաց կարելի է հանդիպել հիսուն հայի, միանշանակորեն վերցված և որոշակի վերափոխման է ենթարկված Աղարիա Ֆրիդոնի լատիներեն տպագիր զեկույցագրից։

⁸⁷ Այս մասին տե՛ս Roberto Gulbenkian. Rapports entre augustines et dominicains portugais et les dominicains arméniens au XVII^e siècle.—In Roberto Gulbenkian. Relações entre Portugal Arménia e médio Oriente. Estudos Históricos. Lisboa, MCMXCV [1995]. pp. 135—137.

զորդին և զեղբայրս, զեղբոր հարսն և զվէղիրս...»³⁸, Ա. Հովհաննիսյանը Ղաբարիա Աղամին նույնացնում է Տաթևի վանքի վանահայր Հովհաննես Ապանսոյու եղբորորդի Ղաբարիա վարդապետի հետ և նույնիսկ ավելի չենուն գնալով եղբակացնում է, թե Ղաբարիան Ապրուպա ժամանելով նպատակ ունենա ստանալու Դրանսիական կառավարության միջնորդությունը Իրանի առջև՝ ետ ստանալու Տաթևի վանքի հափշտակված կալվածքները, և տարակուսում, որ Իսրայելյ Պրին լռում է վերջինիս մասին³⁹: Այս սենսակետը լիովին հիմնադրուկ է: Անասյանը մանրակրկիտ քննելով Վերսալի հանդիպման մասնակիցների ցուցակը, զալիս է ճիշտ եզրակացության, քննության ենթակա անձին նույնացնելով Ղաբարիա Աղամի հետ, որ Պոլսից 1643 թ. Գալանոսի կողմից Հոտմ տարված երեք հայ պատանիներից մեկն էր: Անասյանը սխալվում է միայն, երբ վերջինիս ծննդավայրը հասարում է «Սիսիան գազառը, դուրս և հասանուն գյուղը (այժմյան Հացավանք)»⁴⁰:

Իրականում Ղաբարիա Աղամը դեռ պատանեկության տարիներին մեկնելով Հոտմ, շորս տարի ուսանել է Ուրբասյան վարժարանում, աշակերտել է Կղեմես Գալանոսին⁴¹, 1647—1648 թթ. նա Լեհաստանում էր, որտեղից տեղի արքեպիսկոպոս Սիկոլ Թորոսովիչի մասին խիստ բացասական նամակներ էր ուղարկում Հոտմ: 1655 թ. ուղեկցել է Կղեմես Գալանոսին Արևելքում նրա առարկության ժամանակ: Այնուհետև մոտ տաս տարի աշխատել է որպես Հավատասփյուռ Փողովի թարգմանիչ, զուգահեռ դբադվելով նաև հայերեն Աստվածաշնչի հրատարակչական գործերով: Այս աշխատանքի ժամանակ փորձել է օգտակար լինել Մատթևոս Սարեցուն, Լուկասը եղբորորդի Սողոմոնին և այլոց: 1658 թ. Ջահկեցիների ճաշոցում իր թողած հիշատակարաններից մեկում Ղաբարիան գրում է⁴².

Ձարմ, հայոց Ալիսուլցի,
 Որ մականոամբ Աղամ կոչի,
 Որդի առն շինականի,
 Շեգոմ սուո՛ր ի յասս կագի,
 Յեկեղեցիս յերոյ ազգի,
 Որ է շինեալ յառնոն սրբոյն
 Մարիամու եզիպտագոյն
 Ի րվականիս հայոց գարմի
 Հագար հարիւր երեք եկի | 1658 |
 Մարտի ամսոյն շարագրեցի,
 Տասն և չորսին յաւարակցի:

1660 թ. Գալանոսը Ղաբարիայի թեկնածությունը առաջարկեց որպես Լվովի թեմի առաջնորդ, պայմանով, որ ձեռնադրվի հայոց կաթողիկոսից, սակայն այն անհետևանք է թողնվում Հավատասփյուռ Փողովի կողմից: 1683 թ. Մարսելում ապագրել է լատիներենից թարգմանված և հայկական

³⁸ Տե՛ս Հ. Ա ն ա ս յ ո ս ն, XVII դարի ապատարական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Պատմական հետազոտություն. Երևան, 1961, էջ 315:

³⁹ Տե՛ս Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ապատարական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1959, էջ 323, ծան. 1:

⁴⁰ Տե՛ս Հ. Ա ն ա ս յ ո ս ն, նշվ. աշխ., էջ 178 և հա.:

⁴¹ Այս մասին իր թողած շարժառ հիշատակարաններից մեկում (տե՛ս Ա. վ. Զեմձեմեան, Մայր ցուցակ հայերին ձեռագրաց Մատենագարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ—Ս. Ղազար, 1993, էջ 858) Ղաբարիան գրում է. «Աշակերտեալ բարունապետէ, Աստուածարան կղզմէնթէ»:

⁴² նույն տեղում, էջ 858:

աղբյուրներից լրացված մի ժամանակագրություն՝ «Համառոտ վիսպասանություն...» վերնագրով⁴⁸ (Մարտիկա, 1683):

Զարբարիա Աղամի տապանագիրն է.

ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ ԶԱՔԱՐԵԱՅ Վ[Ա]ՂԴ[Ա]Պ[Ե]ՏԻ ՈՐԴ[Ի]ՈՅ ԱՂԱՄԻ Ի
ԳԱԻ[Ա]ՈՒՆ ՍԻՍԻԱՆԱՅ Ի ԳԵՂՋԷ ԲՆՈՒՆԵԱՅ ԱԳՆ Զ[Ա]Ն[Ա]Զ[Ա]Ն
Ի Ի ԼԵԶ[Ո]Ի[Ա]Գ[Ի]Տ[Ո]ԻԹԻԱՄԻ:

ՀՄՏ[Ա]Յ[Ե]ԱՂ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆԻ ԱՌ ՀԱՅՍ. ՔԱՐՈԶՈՂԻ ՅԱՅՍՄԻԿ ԵԿԵՂԵ՛|
ՅԻՈՋ ԽՈՂՍՏ[Ո]Վ[Ա]ՆԱՀՈՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ. ԳՐԵԱՆՑ ՀԱՅԿԱԿ[Ա]ՆՑ |
Ի ՏՊ[Ա]ՐԱՆԻ ՍՐԲՈՅ Ժ[Ո]Ղ[Ո]Վ[ՈՅ]Ն Ս[Ո]ՒՐ[Բ] ԳՐՈՂԻ. ՈՐ ԼՅԵԱԼ
ԱԻՈՒՐԲԲ |

ՀԷ[77] ԱՄԱՑ ՎՃ[Ա]Ր[Ե]ԱՅ ԶԿԵԱՆՍ ԻԻՐ ԵԻ Փ[Ո]Խ[Ե]Յ[Ա]Մ Ի ԱՌ
Տ[Է]Ր ԼԻ ԱՐԳԵԱՄԲ|| ԵԻ ԱՇԽԱՏԱՆՈՔ ԹՈՂԼՈՎ ԶԻՆՉՍ ԵԻ ԶՍԱՑԻԱՆՍ||
ԻԻՐՍ ԱՅՍՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ. Ի ԺԵ [15] ՕԳ[Ո]ՍՏ[Ո]ՍԻ |
ՅԱՄԻ Տ[Ե]ԱՌՆ ՌՈԶԸ. ԵԻ ՀԱՅՈՑ :|
ՌՂԷ [1688]

Հոռմի հայերեն տապանագրերն ու արձանագրությունները օգնում են ճշգրտելու ոչ միայն Հոռմում գործած հայ հոգևոր ու աշխարհիկ անձանց կենսագրությունները, այլև խիստ կարևոր են հայոց պատմության բազում դրվագների լուսաբանման համար:

⁴⁸ Զարբարիա Աղամի անձին ու նրա զործունեությանը բավական մանրակրկիտ կերպով անդրադառնում են Կ. Ամատունին (Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը, Վենետիկ, 1975) և Ս. Ջեմձեմյանը (Հայ տղազորությունը և Հոռմ (ԺԷ դար), Վենետիկ, 1989): Վերջինս օգտվելով Հոռմի Հավատաստիյուն Ժողովի արխիվային լատիներեն և իտալերեն փաստաթղթերից, ուր Զարբարիայի հայրանունը, նշված Agliam կամ Agam ձևով Աղամի փոխարեն, թյուրիմացարար գրում է Ակամ, որը սխալ է: Զարբարիայի դրած և նրա զործունեության մասին մեծ քանակի փաստաթղթեր են պահվում Հավատաստիյուն Ժողովի դիվանում: Այստեղ տալիս ենք Զարբարիա Աղամի մասին մեր օգտագործած փաստաթղթերի համառոտ ցանկը. SOCG, vol. 61, f. 86rv; vol. 65, f. 130r—131v, 161rv, 166rv; vol. 221, f. 1r—2v; 222, f. 28rv; vol. 223, f. 87rv; (1663, 281), 166rv, 145rv, 356r—358v; 292, f. 237r, 239rv, 416r, 417r, 444r, 451r (?); 316, f. 113rv; 411, f. 212rv, 282rv; 414, f. 140rv; 417, f. 190rv; 451, f. 24r—25v; 476, f. 62r—65v. SC Armeni; vol. 2, f. 383rv; vol. 3, f. 386; 383rv+387rv; 403r—404v; 444rv; 455rv+458rv; 456v; vol. 5, f. 519rv, 614rv+617rv. Acta, vol. 16, f. 427, n. 3.